

---

---

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑՅԱՆԸ ԵՎ ԻՐ «ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՔ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ

*XIX դ. երկրորդ կեսի հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության էջերում Ալեքսանդր Երիցյանի անունն ու գիտական ժառանգությունը գնահատված ու կարևորված են հավուր պատշաճի: Ավելին, նրա որոշ ուսումնասիրություններ այսօր սկզբնաղբյուրի արժեք ունեն՝:*

*Պատմաբան, հնագետ, մանկավարժ և Մոսկովյան հնագիտական ընկերության Կովկասյան բաժանմունքի անդամ Ալեքսանդր Երիցյանը (1841-1902) բեղմնավոր գործունեություն է ծավալել հիմնականում իր ծննդավայր Թիֆլիսում, ուր ավարտել է հռչակավոր Ներսիսյան դպրոցը, ապա և ռուսական գիմնազիան: Մի կարճ ժամանակ դասավանդել է Ներսիսյան դպրոցում: Արգասավոր է նրա գործունեությունը հատկապես հայ ժողովրդի պատմության, հնագիտության, ազգագրության, հասարակական մտքի ու մշակույթի ուսումնասիրման բնագավառներում: Աշխատությունները հիմնականում նվիրված են Ներսես Աշտարակեցու կյանքին ու գործունեությանը, Թիֆլիսի Նեսիսյան դպրոցի, հայ թատրոնի պատմությանը: 1890-ին լույս է ընծայել «Գրիգոր Արծրունու և նրա 25 տարվա գրական գործունեության առթիվ (1865–1890)», ապա՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայր 19-րդ դարում» մենագրությունը: Վերջինիս երկու հատորները լույս են տեսել 1894–1895 թվականներին Թիֆլիսում:*

*Հնագիտությանը մատուցած նրա ծառայությունները գնահատվել են ըստ արժանվույն: Ա. Երիցյանը ընտրվել է Մոսկովյան հնագիտական ընկերության Կովկասյան բաժանմունքի հիմնադիր անդամ:*

*1883 թ. Թիֆլիսում լույս է տեսել Ա. Երիցյանի «Վենետիկի Մխիթարեանք» 162 էջանոց մենագրությունը: Մինչ այդ արևելահայ իրականության մեջ Վենետիկի Մխիթարյաններին նվիրված առանձին ուսումնասիրություն չի հրատարակվել<sup>1</sup>: Ա. Ե-*

---

<sup>1</sup> Ա. Երիցյանի մասին տե՛ս Ա. Հ ա մ բ ա ր յ ա ն. Ալեքսանդր Երիցյան.– ՊԲՀ, 1960, № 1, էջ 181-189, Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1960, էջ 84-86, Ալեքսանդր Երիցյան.– Հայ մշակույթի օրրանը, Երևան, 1971, էջ 122-123, Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Կենսագրական բառարան, հ. Ա, Երևան, 1973, էջ 312-313: Ա. Հ ա մ բ ա ր յ ա ն. Ալեքսանդր Երիցյանի հրապարակած աշխատությունների ցանկ.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 2, էջ 98-102, Ռ. Ս ա ր ի ն յ ա ն. Ալեքսանդր Երիցյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները.– ՊԲՀ, 1982, № 3, էջ 62-72, Ս. Ղ ա ր ի բ ջ ա ն յ ա ն. Կովկասահայոց Այլշանը.– «Գիտություն և տեխնիկա», 1991, № 11-12, էջ 42-48, Ա. Փ ա շ ա յ ա ն. Տիտղոսակիր հայեր, Երևան, 2001, էջ 77-78:

<sup>2</sup> Արևելահայ իրականության մեջ հիշյալ խնդրին ժամանակագրական կարգով անդրադարձել են Ս. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Գ. Արծրունին, Բաֆֆին, Լևոն, Ղ. Աղայանը, Մ. Արեղյանը, Ա. Տեր-

րիցյանի հիշյալ ուսումնասիրությունը մինչև լույս տեսնելը հաստատաբար տպագրվել է «Արձագանքի» 1883 թ. համարներում:

«Վենետիկի Մխիթարեանք»-ը բացվում է «Ս. Ղազարի վանքի հրդեհը: Մխիթարեան հոշակը: Մամուլի լռությունը նոցա գործունեության մասին» երկու էջանոց սեղմ ներածականով, որտեղ հեղինակը հիմնավորել է իր աշխատությունը գրելու հիմնական պատճառը և նպատակը. «Կա՞րողոք գրագետ հայ, որին ծանոթ չլինի Մխիթարեանց միաբանության անունը: Կա՞րանասեր ազգային, որի ձեռքին չգտնվեն Վենետիկցոց հրատարակությունները: Կա՞ր վերջապես մի այլ հիմնարկություն, որով ավելի կարողանայինք պարծենալ լուսավորյալ աշխարհի առաջ այս վերջին 150 տարվա ընթացքում: Այո, Ս. Ղազարու վանքը առաջինը եղավ, որ ծանոթացրեց Եվրոպային հայագիտության հետ: Նա եղավ, որ լույս աշխարհ բերեց մոռացության տրված հայ ձեռագիրները: Նա եղավ, որ նորից վերականգնեցրեց մեր հին գրական լեզուն: Նա եղավ, որ նպաստեց աշխարհաբարի առաջ գալուն, և վերջապես նա եղավ, որ վարժեցրեց հայերիս գիրք գնել, գիրք կարդալ, գիրք պահել»<sup>3</sup>: Արևելահայ իրականության մեջ Ստ. Նազարյանի՝ Մխիթարյաններին տրված սթափ և անաչառ գնահատականից հետո Ա. Երիցյանի՝ վերը տրված բնութագիրը երկրորդն է<sup>4</sup>:

Ա. Երիցյանի մենագրությունը բաղկացած է հետևյալ գլուխներից. «Մխիթար Սեբաստացու կենսագրական աղբյուրները», «Մխիթարի թշնամիները և նոցա ամբաստանությունը», «Վենետիկի ձերականույտից բնակության տեղ խնդրելը», «Ս. Ղազարի մենաստանի շինությունը», «Մխիթարի բնությունը, վարքը, բարքը և ազգասիրությունը, նրա գրականական գործունեությունը», «Մխիթարի հաջորդ արքահայրերը», «Վենետիկի Մխիթարյաններից բաժանված ճյուղը», «Վենետիկ. Մխիթարյանց տպագրության բնութագիրը», «Մխիթարյանք իբրև հրատարակիչք կամ տպագրողք», «Մխիթարյանք իբրև թարգմանիչք», «Մխիթարյանք իբրև հեղինակք»:

Ա. Երիցյանի հիշյալ ուսումնասիրության լույս տեսնելու պահին Մխիթար Սեբաստացուն, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյաններին նվիրված մեծ թվով ուսումնասիրություններ կային թե՛ հայերեն և թե՛ օտար լեզուներով: Հիմք ընդունելով մինչև XIX դ. 70-ականների սկիզբը լույս տեսած հիշյալ գրականությունը՝ Ա. Երիցյանը իր ուսումնասիրության էջերում շարադրել է Մխիթարյան՝ մասնավորապես Վենետիկի միաբանության պատմությունը, հիմնադրման օրվանից մինչև XIX դ. 60-ական թվականները: Հիմնական շեշտը դնելով Մխիթարյանների հայագիտական գործունեության վրա՝ Երիցյանը հավաստում է, որ Մխիթարյանները զգալի չափով նպաստել են հայագիտության զարգացմանը. «Ս. Ղազարու վանքի ավելի քան 160 տարվա գրականական գործունեության միջոցում միմյանց ետև հանդես են եկել

Պողոսյանը, Ռ. Գաբրիելյանը, Թ. Հակոբյանը, Հ. Ստեփանյանը, Բ. Թումանյանը և ուրիշներ. տե՛ս Ա. Փ ա շ ա յ ա ն. Մխիթարյան միաբանությունը Ստեփանոս Նազարյանի գնահատմամբ. – ՊԲՀ, 2006, № 2, էջ 88–93:

<sup>3</sup> Ա. Երիցյան. Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիս, 1883, էջ 2:

<sup>4</sup> С. Н а з а р я н. Обзорение истории Гайканской письменности в новейшие времена. Казань, 1846, с. 72.

մոտ 67 հոգի հեղինակներ և թարգմանիչներ, իսկ Վիեննայի միաբանությունը 95 տարվա մեջ (1773–1868) տվել է մեզ նույն գործով պարապող 44 անձ: Այս 101 հեղինակած և թարգմանչաց թիվը, արդեն ըստ քանակության, ասպարեզում գործողների մի պատկառելի մասն է կազմում և եթե դեռ չի ապացուցանում Մխիթարյանց ջանասիրությունը, գոնե ցույց է տալիս, որ միաբանաց ավելի քան թե մեծ մասն է խնայած յուր լուսման հոգուտ ազգային կրթության<sup>5</sup>:

Ա. Երիցյանը մինչև 1860-ականները Վենետիկի Մխիթարյանների հրատարակած գրքերի մեջ հատկապես կարևորել է հիշյալ միաբանության բազմաշխատ հեղինակներից մեկի՝ Հ. Չոհրապյանի՝ 1805-ին լույս ընծայած Աստվածաշունչը: Ըստ Ա. Երիցյանի՝ Ամստերդամում 1666-ին և Վենետիկում 1735-ին հրատարակված Աստվածաշունչ մատյանների թերություններից «ազատ է Հ. Չոհրապյանի աշխատասիրությամբ 1805 թվին տպագրվածը: Այստեղ արդեն տեսնում ենք մի գիտնականի գործադրած ջանք սխալներից հեռու մնալու համար: Բնագիրը համեմատած է նա ոչ միայն զանազան գրչագրերի, այլև հունական ընտիր օրինակների հետ և գտած զանազանությունները առաջ է բերած ծանոթությանց մեջ<sup>6</sup>: Հայագետներից ոմանք (Հ. Աճառյան, Հ. Անասյան և այլն) բազմիցս անդրադարձել են Աստվածաշունչ մատյանի հայկական բնագրերի մեջ հիրավի կոթողային համարվող Հ. Չոհրապյանի հիշյալ հրատարակությանը: Ա. Երիցյանի՝ Հ. Չոհրապյանի մասին արտահայտած կարծիքից շուրջ մեկ դար անց ահա թե ինչ է գրել հայ մատենագիտության հսկաներից մեկը՝ Հ. Անասյանը. «Հ. Չոհրապյանի այս տպագրությունը կատարվել է Վենետիկի Մխիթարյանների ատենադարանի -1 ձեռագրից, որը 1319 թվականին ընդօրինակվել է ուղղակի Գևորգ Սկևռացու կարգավորած ընտիր օրինակից: Հայերեն Աստվածաշնչի մինչև այժմ եղած տպագրությունների շարքում սա հանդիսանում է միակը, որ ձեռագրական նշանակություն ունի և կարող է ապագայում օգտագործվել Աստվածաշնչի գիտական հրատարակության համար որպես վստահելի օրինակ<sup>7</sup>:

Արևելահայ իրականության մեջ Ա. Երիցյանն առաջինն է անդրադարձել Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների բնագիտական ժառանգությանը: Գրքի քսաներորդ գլուխը նվիրված է հիշյալ խնդրին: Նախքան Մխիթարյանների բնագիտական ժառանգությանն անդրադառնալը, Ա. Երիցյանը գրքի 99-րդ էջում խոսել է, այսպես կոչված, «Օովային գիտությունների» մասին: Հայ ժողովրդի բնագիտական պատմության էջերում առաջին անգամ ենք հանդիպում նման արտահայտության: Ահա հեղինակի մեկնաբանությունը այդ գիտությունների էության մասին. «Հայտնի է, որ թեև հայ մարդը արևելցոց մեջ գուցե ամենից շատ է չափել աշխարհիս ծովերը և օվկիանոսները, այնուամենայնիվ նորա լեզուն շատ աղքատ է նավագնացության վերաբերյալ բառերով և դարձվածքներով: Բացի Նարեկացու հաղորդած հատ ու կտոր բառերը համարյա թե մենք ոչինչ չունենք մեր նախնյաց ծո-

<sup>5</sup> Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 78:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>7</sup> Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 370:

վագնացության մասին: Մինչև անգամ ծովեզրյա Կիլիկիան շատ բան չէ ավելացնում մեր գիտեցածի վրա: Այն ինչ եթե նավագնաց բազմաթիվ հայ վաճառականներին էլ մոռանայինք, հայ մակույկների և նավաստիների հաշիվը այսօր հազիվ թե դյուրին լիներ գումարել: Մեր գրականության մեջ նավարկության վերաբերյալ գրվածը «Նավուղոլոյուն» գիրքն է, տպված դեռևս 1809 թվին, աշխատասիրությամբ Հ. Ղ. Օղուլլուգյանի»<sup>8</sup>:

Մեջբերված հատվածում, ինչպես տեսանք, ի մասնավորի նշված է Նարեկացու անունը: Խոսքը Գրիգոր Նարեկացու հանրահայտ «Մատյան ողբերգության» գործի մասին է, որի էջերում, առաջինը հայ իրականությունում մանրամասն նկարագրված է իր ապրած ժամանակաշրջանում՝ այն է՝ X դարում, նավի կառուցվածքը: Ըստ Գրիգոր Նարեկացու՝ նավը պատրաստելու համար իրար են կցորդել զույգ գերաններ՝ ստեղծելով խարիսխ: Ամուր ողնափայտի զիստը՝ հիմքը, ամրացվել է շատ պինդ կապաններով: Նավն ունեցել է դեկ, ուղղությունը պահպանող հարմարանք, տախտակամածում՝ միմյանց հետ մեխերով ամրացված տախտակաշարեր<sup>9</sup>:

Խոսելով Վենետիկի Մխիթարյանների բնագիտական ժառանգության մասին, Ա. Երիցյանը գրում է. «Ահա Վենետիկցոց մի այլ թույլ կողմ, որ լռությամբ անցնել չենք կարող: Այնքան ուժ տալով կրոնական գրվածներին, Վենետիկցիք չեն սիրում բնական գիտությունները, որ Արարչի անսահման մեծության և գոյության հետ ծանոթացնողներն են և փառավորողները»<sup>10</sup>:

Միանգամայն անընդունելի է մեզ համար Ա. Երիցյանի՝ վերը արտահայտած մտքերը: Մեր ուսումնասիրություններում հիմնավորել և գիտական շրջանառության մեջ ենք դրել այն դրույթը, որ հայատառ բնագիտական տպագիր գրականության սկզբնավորողները Վենետիկի և Վիեննայի Մխիթարյաններն են<sup>11</sup>:

Մինչև Ա. Երիցյանի գրքի լույս տեսնելը, այն է՝ 1883 թվականը, Վենետիկի հայրերը լույս են ընծայել մեկ տասնյակից ավել բնագիտական ուսումնասիրություններ, որոնց մեջ ժամանակագրական կարգով առաջնությունը պետք է տալ հենց իր՝ Ա. Երիցյանի հղած Ղ. Օղուլլուխյանի՝ նավագնացությանը նվիրված հայատառ առաջին տպագիր գրքին:

Մեր ուսումնասիրություններից մեկում առաջին անգամ Հայաստանում գիտական շրջանառության մեջ դրեցինք Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս վարդապետ Օղուլլուխյանի «Ուսումնականություն Նավուղոլոյուն» գիր-

<sup>8</sup> Ա. Երիցյան. նշվ. աշխ., էջ 99:

<sup>9</sup> Գրիգոր Նարեկացու Մատյան ողբերգության, Երևան, 1996, էջ 103:

<sup>10</sup> Ա. Երիցյան. նշվ. աշխ., էջ 99:

<sup>11</sup> Տե՛ս մեր հետևյալ ուսումնասիրությունները. 19-րդ դարի քիմիան հայ բնագետների աշխատություններում, Երևան, 1992, 160 էջ, 19-րդ դարում Մխիթարյանների հրատարակած հանրագիտարանները. – «Պայքար», 1998, հ. 1, էջ 31-33, 18-19-րդ դարերում Վենետիկի Մխիթարյան միաբանության հրատարակած բնագիտական աշխատությունները. – «Էջմիածին» ամսագիր, 1998, ԺԲ, էջ 64-68, Մխիթարյանների բնագիտական թարգմանությունները ԺԸ-ԺԹ դարերում. – «Բազմավեպ», 2002, հ. 1-4, էջ 408-431, Հայր Մինաս Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» հանրագիտարանը. – «Բազմավեպ», 2004, հ. 1-4, էջ 467-476, Մեսրոպ Աղաչարաղյանի գիտական ժառանգությունը. – ՊԲՀ, 2004, № 1, էջ 133-142:

քր, որը ժամանակակից հայերեն տերմինաբանությամբ կհնչի «Նավագնացության հիմունքները»<sup>12</sup>: Շուրջ երկու դար առաջ վարդապետ այս բնագետը՝ Ղուկաս Օղուլլուխյանը, գրաբարով գրված 288 մեծադիր էջեր պարունակող հիշյալ գրքում իրականացրել է գիտական աշխատանք: Շոշափել է մաթեմատիկայի, ծովագնացության, աստղագիտության, մակընթացությունների և տեղատվությունների, արեգակի խավարման պահերի, քարտեզների ու նավարկությունների տեսակների և նմանատիպ խնդիրներին նվիրված հարցեր:

Մեր ուսումնասիրությունները պարզել են, որ 1614 թ. մարդկությանը հայտնի լուգարիթմական աղյուսակները առաջին անգամ հանդիպել ենք Ղ. Օղուլլուխյանի նշված աշխատությունում: Բաղդատելով Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների՝ բնական և ճշգրիտ գիտություններին նվիրված ուսումնասիրությունները՝ Ա. Երիցյանն առաջնությունը տվել է Վիեննայի Մխիթարյաններին. «Վիեննայի Մխիթարեանք օրինակ ավելի հետամուտ են բնական գիտութեանցը»<sup>13</sup>:

Դժվար է այս հարցին միանշանակ պատասխանելը: Մինչև Ա. Երիցյանի գրքի լույս տեսնելը՝ 1880-ականների սկիզբը, համենայնդեպս, Վենետիկի Մխիթարյանները բնական գիտություններին մեծ թվով ուսումնասիրություններ են նվիրել: Միայն «Բազմավեպ» ամսագրում 1843–1880-ականներին, մեր մոտավոր հաշվումներով, ֆիզիկային, քիմիային, աստղագիտությանը, կենսաբանությանը, հանքաբանությանը և օդերևութաբանությանը նվիրված հոդվածների թիվը շուրջ 300 է<sup>14</sup>:

Ա. Երիցյանը, Մխիթարյանների բնագիտական ժառանգությունը քննարկելիս, ոչ միայն առաջնությունը տվել է Վիեննայի Մխիթարյաններին, այլև նսեմացրել Վենետիկի Մխիթարյանների՝ հիշյալ բնագավառում ներդրած վիթխարի նպաստը<sup>15</sup>:

Ինչ-որ տեղ համաձայն ենք բերված արտահայտության առաջին մասին: Լինելով կրոնական միաբանություն, ինչ խոսք որ Վենետիկի Մխիթարյանները իրենց ուշադրությունը պետք է բնեռեին կրոնափիլիսոփայական ուսումնասիրությունների հրատարակմանը, այլ լեզուներից նմանատիպ գրքերի թարգմանությանը: Սակայն նրանց հրատարակած շատ ու շատ ուսումնասիրություններ Գ. Լևոնյանի դիպուկ բնութագրությամբ «Ահա այսպիսի ծավալուն տպագրական-հրատարակչական գործ են կատարել Վենետիկի Մխիթարյանները անկախ այն բանից, թե գիտական և գրական տեսակետից որքան անարժեք բազմահատոր գրքեր էլ կան այդ ընտիր հրատարակությունների մեջ, որոնք եթե լույս տեսած չլինեին, ոչ մի կորուստ չէր ունենա մեր ազգային մտավոր կուլտուրան, մանավանդ սրբոց վարքին և կենսագրություններին, ճառերին և մեկնություններին նվիրվածները»<sup>16</sup>:

<sup>12</sup> Ա. Փ ա շ ա յ ա ն. Նավագնացությանը նվիրված հայերեն առաջին գիրքը.– «Բնագետ», 1999, № 1-2, էջ 100-101:

<sup>13</sup> Ա. Երիցյան. նշվ. աշխ., էջ 100:

<sup>14</sup> Ա. Փ ա շ ա յ ա ն. Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները ԺԸ-ԺԹ դարերում.– «Բազմավեպ», 2001, հ. 1-4, էջ 340:

<sup>15</sup> Ա. Երիցյան. նշվ. աշխ., էջ 99:

<sup>16</sup> Գ. Լևոնյան. Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 199-200:

Խիստ վիճահարույց է Ա. Երիցյանի՝ «Վենետիկցիք չեն սիրում բնական գիտություններ» միտքը:

Հայտնի է, որ Վենետիկի Մխիթարյանների՝ 1843-ից լույս ընծայած «Բազմավեպ» ամսագիրը իր հիմնադրման պահից շուրջ կես դար բնագիտական ուղղվածություն է ունեցել: «Բազմավեպի» 1843-ի անդրանիկ համարի առաջաբանում կարդում ենք. «Բնագիտական գիտությունը զանազան ճյուղեր կրաժանվի և անթիվ օգուտներ կրեքե մարդուն, ու ամեն հասակի համար շատ զվարճալի տեղեկություններ կուտա»: Այնուհետև նույն տեղում սեղմ շարադրանքում բնութագրելով բնաբանության (ֆիզիկայի), բնալուծության (քիմիայի), աստղաբաշխության, երկրագիտության և հանքաբանության գիտական ու առանձնապես գործնական նշանակությունը, «Բազմավեպը» հրահանգել է հայ ընթերցողներին առանձին ուշադրությամբ ուսումնասիրել բնագետների գործերը:

Հայ աստղագիտության պատմության քաջագիտակ Բ. Թումանյանի հաշվումներում «Բազմավեպում» հիմնադրման օրվանից՝ 1843-ից մինչև 1920 թթ. հրատարակվել է միայն աստղագիտությանը նվիրված 180 հոդված: Եվ սա այն դեպքում, երբ Վիեննայի Մխիթարյան միաբանության «Հանդես ամսօրյայի» 1887–1910 թթ. համարներում աստղագիտությանը նվիրված հոդվածների թիվը հազիվ երկու տասնյակ է<sup>17</sup>:

Ա. Երիցյանի գիրքը ավարտվում է «Համառոտ ցուցակ Վենետիկի Մխիթարեանց աշխատասիրութեանց» 10 էջանոց արժեքավոր մատենագիտական ցանկով: Այն կազմված է ոչ թե ժամանակագրական, այլ տպագրված գրքերի հեղինակների ազգանունների այբբենական կարգով: Արևելահայ իրականության մեջ մատենագիտական այս ցուցակը իր տեսակով առաջինն է և ճանաչողական իմաստով կարևոր: Ընդգրկված են մինչև 1881 թ. լույս տեսած գրքերի 69 հեղինակների գործերի ցանկը:

Մատենագիտական հիշյալ ցանկում առկա են մեծ թվով անճշտություններ: Այսպես, Վենետիկի Մխիթարյան միաբանության արքահայրերից մեկը՝ Գևորգ Հյուրմյուզյանը (1799–1876) եղբոր՝ հիշյալ միաբանության անդամ Էդուարդ Հյուրմյուզյանի (1799–1876) հետ թարգմանել են ֆրանսիացի պատմաբան Շ. Ռոլենի «Հնախոսության» վեց հատորները, որոնք լույս են տեսել 1825–1829 թթ. Վենետիկում: Այնինչ եղբայրները հիշյալ ցանկում ներկայացված են որպես հեղինակներ: Նույն վրիպումը կա Վրթանես Ասկերյանի և այլոց անուններով բերված ցանկերում:

Իր բոլոր բացթողումներով և անճշտություններով հանդերձ Ա. Երիցյանի «Վենետիկի Մխիթարեանք» աշխատությունը՝ որպես արևելահայ իրականության մեջ Մխիթարյան հայրերի գրական, գիտամանկավարժական, թարգմանչական, հրատարակչական գործունեությանը նվիրված առաջին ուսումնասիրություն, երբեք չի կորցրել և չի կորցնելու իր գիտական արժեքը:

<sup>17</sup> Բ. Թումանյան. Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1968, էջ 106-116:

## АЛЕКСАНДР ЕРИЦЯН И ЕГО ТРУД “МХИТАРИСТЫ ВЕНЕЦИИ”

*АСАТУР ПАШАЯН*

## Р е з ю м е

Историк, археолог, педагог и член Кавказского отделения Московского археологического общества Александр Ерицян (1841–1902) является автором более десяти монографий, одна из которых, двухтомник “Католикосат всех армян и армяне Кавказа XIX века” был издан в Тифлисе в 1894–1895 гг. В 1883 г. в Тифлисе вышла в свет книга А. Ерицяна “Мхитаристы Венеции” (162 с.). Это первая книга на армянском языке в Восточной Армении, которая полностью посвящена конгрегации венецианских мхитаристов. На страницах книги автор высоко оценил арменоведческую деятельность этой конгрегации. XX глава монографии посвящена естествоведческой деятельности конгрегации венецианских мхитаристов, где впервые рассмотрена и высоко оценена книга члена конгрегации Л. Огулугяна “Основы навигации” (Венеция, 1809, на древнеарм. яз.).